Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

ԽՆ-426-17.12.2019-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» 2002 թվականի փետրվարի 06-ի ՀՕ-305 օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 15-րդ հոդվածի իններորդ պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ.

«Քրեական վարույթն իրականացնող կամ այլ մարմնի որոշմամբ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունը չի կարող արգելվել սույն օրենքի 48-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ նախատեսված անձանց հետ, բացառությամբ եթե այդ անձիք տվյալ քրեական գործով ներգրավված են որպես դատավարության մասնակից կամ վկա կամ եթե քրեական վարույթն իրականացնող մարմնի պատճառաբանված որոշմամբ ձերբակալված կամ կալանավորված անձին տեսակցելը սույն օրենքի 48-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ նախատեսված անձանց արգելվել է:»:

Հոդված 2. Օրենքի 48-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը «մուտքի և ելքի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ձերբակալվածներին պահելու վայրում և կալանավորվածներին պահելու վայրում պահվող անձանց հետ անարգել տեսակցելու» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ
Խ-426-17.12.2019-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» 2002 թվականի փետրվարի 06-ի ՀՕ-305 օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 15-րդ հոդվածի իններորդ պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ.

«Քրեական վարույթն իրականացնող կամ այլ մարմնի որոշմամբ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունը չի կարող արգելվել սույն օրենքի 48-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ նախատեսված անձանց հետ, բացառությամբ եթե այդ անձիք տվյալ քրեական գործով ներգրավված են որպես դատավարության մասնակից կամ վկա կամ եթե քրեական վարույթն իրականացնող մարմնի պատճառաբանված որոշմամբ ձերբակալված կամ կալանավորված անձին տեսակցելը սույն օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված անձանց արգելվել է:»:

Հոդված 2. Օրենքի 48-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը «մուտքի և ելքի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ձերբակալվածներին պահելու վայրում և կալանավորվածներին պահելու վայրում պահվող անձանց հետ անարգել տեսակցելու» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Խ-426*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Առաջարկության հեղինակը	*Հոդվածը, կետը*	*Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)*	*Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը*	*Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը*
Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 1-ին հոդված	Լրացվող միտքը շարունակել հետևյալ բառերով. «կամ եթե քրեական վարույթն իրականացնող մարմնի պատճառաբանված որոշմամբ ձերբակալված կամ կալանավորված անձին տեսակցելը սույն օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված անձանց արգելվել է»:	Ընդունվել է, լրացվել է	Չի ընդունվել
Կառավարություն	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ	Խմբագրել հետևյալ կերպ. ««Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասում «Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց կողմից ձերբակալված և կալանավորված անձանց հետ տեսակցությունները չեն ազդում սույն օրենքով սահմանված՝ ձերբակալված և կալանավորված անձանց տրամադրվող տեսակցությունների քանակի	Չի ընդունվել	Ընդունվել է

		վրա:» նախադասությունից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններ. «Եթե առկա է քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշում ձերբակալված կամ կալանավորված անձանց հետ տեսակցությունն արգելելու մասին, սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձինք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող են բացառապես հաղորդակցվել ձերբակալված կամ կալանավորված անձանց հետ: Հաղորդակցությունը չի կարող իրականացվել մեկուսի: Եթե առկա է քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշում ձերբակալված կամ կալանավորված անձանց հետ տեսակցությունն արգելելու մասին, սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձինք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող են տեսակցել ձերբակալված կամ կալանավորված անձանց քրեական վարույթն իրականացնող մարմնին դիմելու և թույլտվություն ստանալու դեպքում: Տեսակցության թույլտվություն տրամադրելը մերժվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի պատճառաբանված որոշմամբ:»:»:		

Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Խմբագրել հետևյալ կերպ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:»:	Չի ընդունվել	Ընդունվել է